ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
« ՀՀ ՇՄ ԳՀԱՇՁԲ 18/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Գյումրի

03.04.2018թ.
ժամ. 10:00

Նիստին մասնակցում են՝
Հանձնաժողովի նախագահ Է. Սիմոնյան՝ ԳՊ/ԳԱՊ
Հանձնաժողովի անդամներ Ա.Հովհաննիսյան՝ ԳՊ/ԳԱ, Ն.Հայրապետյան՝ ԳՊ /ԳԱ
Ք. Մանուկյան՝ ԳՊ/ԲԱ, Ն. Հովսեփյան՝ ԳՊ/ԲԱ
Հանձնաժողովի քարտուղար Խ. Խնձրցյան՝ ԳՊ/ՄՀՄ

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

(Է. Սիմոնյան)

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը
1.Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.
2.Որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերի ներկայացման մասին:
3.Գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին.

Քվերակությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

2 Որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերի ներկայացման մասին

(Է. Սիմոնյան)

1) Ընդունել ի գիտություն, որ <<ՄարտՇին>> ՍՊԸ սահմանված ժամկետում ներկայացրել է «Սպանդարյանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության շենքի ջեռուցման համակարգի վերականգման աշխատանքների ձեռքբերման ՀՀ ՇՄ ԳՀԱՇՁԲ 18/01 ծածկագրով անցկացվող գնանշման հարցման հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

2) Ընդունել ի գիտություն, որ վերը նշված փաստաթղթերի պատճենները տրամադրվել են հանձնաժողովի նախագահին և անդամներին:

3) Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերն ամբողջական չեն, ինչպես նաև ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները.

ա) << ՄարտՇին>> ՍՊԸ հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ և հայտում ներառվող՝ իր կողմից հաստատվող, փաստաթղթերը պետք է հաստատված լինեն միայն էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

բ) <<Աշխատանքային ռեսուրսներ>> որակավորման չափանիշը գնահատելու համար անհրաժեշտ է հավաստիացնել Ավետյան Արտյոմ Խաչատուրի առնվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքային փորձը: (էներգետիկ համակարգերի շինարարության և շահագործման գործունեության ոլորտներում):

գ) Հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին ներկայացված, նախկինում կատարած նմանատիպ աշխատանքների պայմանագրերում նկատվել են.

№ ՍԸ ԱՇՁԲ-10/40-11 պայմանագրի պատշաճ կատարումը գնահատել հնարավոր չէ, քանի որ ներկայացված պայմանագիրն ու նրա փոփոխությունը լիարժեք չեն:

Ոչ լրիվ ներկայացված հանձման-ընդունման № 1 և № 2 արձանագրություններում բացակայում են գնման հայտը նախագծած ներկայացուցչի եզրակացությունները, բոլոր հաշիվ ապրանքագրերի պատճենները և հավելված 4.1-ը:

Ինչպես նաև № ՍԸ ԱՇՁԲ-10/40-11 պայմանագրի 4.6 կետի պահանջը. (պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի № 626-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի կողմից աշխատանքներն ընդունվելու դեպքում):

№ ՀՀ ԴԴ ՊԿՀ-ՊԸԱՇՁԲ-01/16-01 պայմանագրի ներկայացված հանձման-ընդունման № 1 արձանագրությունում բացակայում է գնման հայտը նախագծած ներկայացուցչի եզրակացությունը:

Ինչպես նաև № ՀՀ ԴԴ ՊԿՀ-ՊԸԱՇՁԲ-01/16-01 պայմանագրի 4.6 կետի պահանջը. (պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի կողմից աշխատանքներն ընդունվելու դեպքում):

№ ՀՀ ՏՄ-ԲԸՀԱՇՁԲ-17/02/01 պայմանագրի պատշաճ կատարումը գնահատելու համար անհրաժեշտ է ներկայացնել տվյալ պայմանագրի կողմերի հաստատած պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող բոլոր հաշիվ ապրանքագրերի և ակտերի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները,

Ներկայացված հանձման-ընդունման № 1, № 2 և №3 արձանագրություններում բացակայում են գնման հայտը նախագծած ներկայացուցչի եզրակացությունները:

Ծանոթություն - Գնման հայտը նախագծած ներկայացուցչի եզրակացությունները վերաբերվում են ՀՀ ֆինանսների նախարարի 01.04.2015 թ. <<Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ եզրակացության ձևը հաստատելու մասին>> 180-Ն հրամանին (նորը 20.05.2017 թ. № 228-Ն հրաման):

Հանձնաժողովի քարտուղարին. համակարգի միջոցով ծանուցել առաջին տեղ զբաղեցրած <<ՄարտՇին>> ՍՊԸ առաջարկել մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Քվերակությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

3. Հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

(Է. Սիմոնյան)

Հաստատել հանձնաժողովի նիստերի անկացման հետևյալ ժամանակացույցը.

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել մեկ աշխատանքային օր հետո ժամը 12:00-ին, ՀՀ Շիրակի մարզպետարանում հասցե՝ ք. Գյումրի, Գ. Նժդեհ 1ե

Քվերակությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ Է. Սիմոնյան

Անդամներ՝ Ա. Հովհաննիսյան

Ն. Հայրապետյան

Քաջ. Մանուկյան

Ն. Հովսեփյան

Քարտուղար՝ Խ. Խնձրցյան